



ՀԱՏՈՒՄՆԵՐ ՏՆՕՐԵՆԻՆ «ՀՈՒՄԿ ԲԱՆՔ»-ԷՆ

Բառը, որ այսօր կը փափաքիմ յանձնել ձեզի եւ խնդրել, որ տանիք հետերնիդ, ԶԱՆՔ բառն է: Ինչպէս ամէն բանի մէջ, ջանքն է որ կ'արդիւնատորէ աշխատանք մը: Առանց ջանքի կատարուած գործ մը, պիտի չտայ բաւարար արդիւնք: Ինչ է տարբերութիւնը աշխատասիրութեան եւ ջանասիրութեան... Մէկը **աշխատանքը** սիրելն է, միւսը... **աշխատիլը** սիրելն է: Զանասիրութիւնը գործուն վիճակ է: Աշխատասիրութիւնը կայուն որակ է. ջանասիրութիւնը զարգացող հմտութիւն է: Զանասէր անձը կը սիրէ աշխատիլ, իսկ աշխատիլ սիրողը չի յուսահատիր, դժուարութեան դիմաց կը լարէ ուժերը, կը պրկէ մարմինը, կ'ամրապնդէ հոգին եւ իր անձը կը մղէ աւելիին ձգտելու:

Փայլուն ապագան ջանասէր անձին է: Զանասիրութիւնը հմտութիւն է, որ կարելի է զարգացնել որեւէ անձի մէջ, անկախ անոր ընդունակութիւններէն: Ա՛յդ հմտութիւնն է, որ կը ջանանք տալ ձեզի, որովհետեւ կեանքի մէջ յաջողութեան պայմանը նիշը չէ, այլ լաւ արդիւնքի հասնելու համար կատարուած ջանքը, մէկ խօսքով ջանասիրութիւնը:

... Այստեղ ձեր ստացած կրթութեամբ, այս դպրոցին մէջ ձեր սորված ջանասիրութեամբ եւ Ամենակալին սիրով ու ողորմածութեամբ, պիտի կարենաք գծել ձեր ուրոյն ճամբան եւ ընթանալ առաջ. արդ ձեզմէ կը խնդրեմ միայն, որ երբեմներբեմն նայիք ետ եւ յիշէք նաեւ այս մայրական գիրկը, ինչպէս մենք միշտ պիտի յիշենք ձեզ սիրով ու խանդաղատանքով:



ՏԻԱՐ ՈԱՅՏԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՏՈՒԱՐԻ ԽՈՍՏՈՒՄ ԿԸ ԿԱՏԱՐԸ

2023 Յունիս 5-էն 11 երկարող շաբաթը բացառապէս տոնական էր Պէյրութի Հայ աւետարանական գոլէճին համար:

Յօրեկեանին նուիրուած նախորդ երեք ձեռնարկներէն՝ 4 Նոյեմբեր 2022-ի շրջանաւարտից հաւաքէն, 5 Փետրուարի գոհաբանական պաշտամունքէն եւ 5 Մայիսի աշակերտական գործունէութիւններու օրէն ետք, վերոյիշեալ շաբթուան ընթացքին տոնակատարութիւնները հասան իրենց գագաթնակէտին: ➔

**ԲԱՐԵՐԱՐ ՀՐԳՉ ՄԻՍԵՌԵԱՆ
10.000 ՏՈՒԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԸ**

Գոհունակութեամբ կը ծանուցանենք, թէ դպրոցի հիմնադրութեան 100-ամեակի այս տարւոյն, դպրոցի բարերարներէն եւ երախտագետ նախկին աշակերտներէն փարիզաբնակ տիար Հրաչ Միսեռեան իր տարեկան յատկացումը կատարեց տրամադրելով 10.000 տոլարի կանխիկ գումար, իր հանգուցեալ ծնողաց Գեղամ եւ Ալիս Միսեռեաններու բարի յիշատակին:

Բարձրօրէն կը գնահատենք տարուէ տարի շարունակուող այս նուիրատուութիւնը եւ խորին շնորհակալութիւն կը յայտնենք բարերարին:





կատարեց: Ճաշկերոյթին ելոյթ ունեցան Ամերիկայի հայ անտարանչական ընկերակցութեան նախագահ, ՀԱԳ շրջանաւարտ դոկտ. Նազարէթ Տարաքճեան եւ դպրոցի հոգաբարձութեան ատենապետ պարոն Ներսէս Պաղտոյեան: Ելոյթ ունեցաւ նաեւ «Տիր» հնգեակը:




Արդարեւ, 6 Յունիսին տեղի ունեցաւ «ՅԱՐԳԱՆՔԻ ԵՒ ԵՐԱԽՏԻՔԻ ՍՐԱՀ»-ի ԲԱՅՈՒՄը եւ ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆԻ «ԱՊՐՈՂ ԷԶԵՐ ԱՆՅԵԱԼԷՆ» ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍը: Հատորը ներկայացուց շրջանաւարտ պարոն Պարոյր Ադպաշեան: Սոյն գիրքին հետ, ներկաները ստացան երկու գրքոյկներ՝ ՀԱԳ-ի հիմնադիր տնօրէն Պետրոս Քարծայրի մասին պատմող գրքոյկ մը, ինչպէս նաեւ դպրոցի հիմնադրութեան հանգամանքները ներկայացնող այլ գրքոյկ մը, հեղինակութեամբ դոկտ. Յուսիկ Տօնապետեանի: Երեք հրատարակութիւններն ալ խմբագրած էր դոկտ. Իւրնէշեան: Գիրքին հասոյթը տրամադրուած է ՀԱԳ Ուսուցչաց ֆոնտին:



11 Յունիսին Հայ անտարանական առաջին եկեղեցիին մէջ կայացաւ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅՈՐԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ: Եկեղեցոյ երկու յարկերը լեցուն էին պաշտօնական հիւրերով, բարեկամներով, ուսուցիչներով, շրջանաւարտներով: Վերապատուելի Ղազարեանի ողջոյնի խօսքէն եւ աղօթքէն ետք ելոյթ ունեցաւ տնօրէնը, որուն խօսքը ամբողջութեամբ կրնաք կարդալ <https://aec100years.wordpress.com/> յղումով: Ողջոյնի խօսք ուղղեց ԱՀԱԸ-ի գործադիր տնօրէն պարոն Զաւէն Խանճեան (*խօսքը նոյնպէս վերոյիշեալ կայքին վրայ*): Ապա հոյակապ համերգային

10 Յունիսին Kempinski-Summerland պանդոկին մէջ տեղի ունեցաւ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԿԱԼԱՃԱՇԿԵՐՈՅԹը, նախագահութեամբ դպրոցի երկարամեայ բարերար տիար Ռաֆֆի Մանուկեանի, որ այս առթիւ տաս տարուայ վրայ երկարող մէկ միլիոն տոլարի օժանդակութեան խոստում





ծրագրով մը ելոյթ ունեցաւ Պէյրութի սիմֆոնիք նուագախումբը, որ մայեսթրօ Կարօ Ալեւեանի ղեկավարութեամբ ներկայացուց հայկական, լիբանանեան եւ միջազգային դասական կտորներ, որոնք կ'արտացոլէին հայութեան եւ ՀԱԳ-ի պատմութիւնը՝ նախատեղեկնեան շրջանէն, անդրադառնալով հայ կեանքի եւ Լիբանանի վերիվայրումներուն ու դպրոցի կեանքին, միաժա-

մանակ վճռական հայեացք ուղղելով դէպի ապագայ: Հանդիսութիւնը փակուեցաւ ՄԱՀԱԵՄ նախագահի տեղապահ վեր. դոկտ. Փօլ Հայտութեանի առաքելական օրհնութիւնով:

Հանդիսութիւնը ամբողջութեամբ կարելի է դիտել հետեւելով

<https://www.facebook.com/aecollege.lb> էջին:


100-ամեակի ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ՕՐ



2023 Մայիս 5-ը ՀԱԳ-ի վերջին տարիներու ամէնէն յատկանշական եւ ուրախ օրերէն մին էր, հաւասարապէս բոլորին՝ աշակերտներուն, ուսուցիչներուն, պաշտօնէութեան եւ տնօրէնութեան համար: Այդ օր բոլորը միասնաբար նշեցին ՀԱԳ-ի 100-ամեակը՝ շուրջօրեայ յատուկ յայտագիրով: Առիթ էր անդրադառնալու անցեալին եւ շնորհակալութիւն յայտնելու դպրոցի հիմնադիրներուն եւ զայն 100 տարի պահպանողներուն, մանաւանդ հիանալի հնարաւորութիւն էր յիշելու եւ փառաբանելու զԱստուած՝ իր առատաբաշխ շնորհներուն համար:



ԱԼՊՈՄ



ՀԱԳ կը դառնայ շրջակայ միջավայրի բարեկամ տեղադրելով արեգակնային ուժանիւթի վահանակներ, շնորհիւ ՄԱՀԱԵՄ-ի ջանքերուն, Միութեան բարեկամ հաստատութիւններու եւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան օժանդակութեան:

Այս ծրագիրը միացեալ ծրագիր է Հայ Աւետ. Ա. եկեղեցւոյ, ՀԱԳ-ի եւ Հայկազեան համալսարանին միջեւ:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՆՈԳԵԿՈՉՈՒՄ



Հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան 108-ամեակին առթիւ ՀԱԳ-ի աշակերտները, 28 Ապրիլին, իրենց ելոյթներով ոգեկոչեցին սուրբ նահատակներուն յիշատակը եւ վերանորոգեցին իրենց պահանջատիրական ուխտը: Ատենամարզանքը կազմակերպուած էր Հայկական ակումբին կողմէ: Իսկ 25 Ապրիլին մասնակցեցան Անթիլիասի կաթողիկոսարանի շրջափակին մէջ կազմակերպուած աշակերտական հաւաքին:

ՀԱԳ-Ի ՏԻԿՆԱԼՆՑ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ ՊՏՈՅՏ ԴԷՊԻ ժԸՋՁԻՆ



Տիկնանց ընկերային յանձնախումբը յաջող պտոյտ մը կազմակերպեց դէպի Ժրզզին, Շաբաթ 29 Ապրիլ



2023-ին, 250 հոգիի մասնակցութեամբ: Խումբը այցելեց Քարխայի Բիզանդական եկեղեցին, Ֆերիտ Սրիալի պալատը եւ այլ տեսարժան վայրեր: Տիկնանցի անդամուհիները, գլխատորութեամբ ատենապետուհի տիկ. Ռուպինա Արթինեանի, ինչպէս միշտ շատ լաւ կազմակերպած էին պտոյտը:




ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ՆԱԽԱՃԱՇ

Մայիս 11-ին ՀԱԳ-ի Ծնողաց մարմինը կազմակերպեց իր ամսական նախաճաշը: Ելոյթ ունեցան մանկապարտէզի եւ նախակրթարանի աշակերտները: Հայկազեան համալսարանի դասախօս դոկտ. Քրիստին Արզումանեան մայրերուն խօսեցաւ «Բարօրութիւնը տան մէջ» նիւթով: Հայկական երգերով յայտագիրը ճոխացուց Կարէն Գազանճեան:





ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ ԵՒ ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՈՒՄ



Շաբաթ, 1 Յուլիսին տեղի ունեցավ ՀԱԳ-ի 96-րդ հունձքի ասարտական հանդիսությունը:

Հանդիսատուր մուտքէն ետք վեր. Ժիրայր Ղազարեան մատուցեց աղօթքը, որմէ ետք օրուան պատգամը յղեց դոկտ. Շաղիկ Խիտավերտեան (*խօսքը ամբողջովին <https://aec100years.wordpress.com/2023/07/04/guest-speaker-dr-shaghig-hudaverdians-keynote-speech-to-class-of-2023/> յղումով*):

Շրջանաւարտ Հրակ Մամիկոնեան ասմունքեց Մեծարենցի «Արդի մարդուն Հայր մերը» քերթուածը, իսկ Մէյրի Իշխանեան երգեց Կապուտիկեան-Կոտոյեանի «Իմ Երեւան»-ը, մինչ նախակրթարանի ընթացաւարտները արտայայտեցին իրենց զգացումները դպրոցին հանդէպ եւ մաղթանքները՝ անոր հարիւրամեակին առթիւ: Աշակերտներէ բաղկացած երաժշտական ինքնագործ անսամպլը մայեսթրօ Կարօ Աւետեանի խորհրդատուութեամբ, (դաշնամուր՝ Վարդան Աւետեան, ջութակ՝ Մարիա Էլմաճեան եւ Վահան Աւետեան, թաւ ջութակ՝ Գէորգ եւ Հրակ Պալեան, կիթառ՝ Տարօն Գոճայեան) կատարեց «Կտոր մը երկինք», «Ապարան» եւ «Քան-քան» կտորները:

Վկայականներու եւ մրցանակներու բաշխումէն ետք իր «հուսկ բանք»-ը արտասանեց տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեան (*խօսքը ամբողջովին <https://aec100years.wordpress.com/2023/07/04/principals-speech-to-class-of-2023/> յղումով*):

Առ ի շնորհակալութիւն Հայկազեան համալսարանին, հոգաբարձութեան ատենապետ պրն. Ներսէս Պաղտոյեան եւ հովիւը յուշանուէր մը յաճնեցին համալսարանի հոգաբարձութեան

փոխատենապետ պրն. Ճոն Սաղըրեանին, որ ստանձնեց այն յանուն վեր. դոկտ. Փօլ Հայտութեանի, որ կը բացակայէր երկրէն:

Հովիւին առաքելական օրհնութենէն ետք շրջանաւարտներ ընդունեցին շնորհաւորութիւններ եւ հատեցին տօնական կարկանդակը: Հանդէսի հիւրասիրութիւնը ստանձնած էր դպրոցի Տիկնանց օժանդակ յանձնախումբը:

Ի շարս այլ մրցանակներու, ասարտական դասարանի 3 աշակերտներ՝ Մէյրի Իշխանեան, Հրակ Մամիկոնեան եւ Գէորգ Պաստաճեան ստացան Ռաֆֆի Մանուկեան բացառիկ կարողութեանց 1000 տոլարի մրցանակները. Հրակ Մամիկոնեան պարգեւատրուեցաւ նաեւ «Տիպար աշակերտ»-ի շքանշանով:





Կիրակի, Յունիս 4-ին, Հայ աւետ. Ա. եկեղեցւոյ պաշտամունքին ընթացքին տեղի ունեցաւ Շրջանաւարտից նուիրման պաշտամունք:



ՄԱՆԿԱԳՊԱՐՏԵՋԻ ՀԱՆԴԻՍ

Ուրբաթ, 23 Յունիսին տեղի ունեցաւ դպրոցի մանկապարտէզի հանդէսը, որ նուիրուած էր դպրոցի հարիւրամեակին: Բողոք, Կոկոն եւ Ծաղիկ դասարաններու աշակերտները իրենց երգով ու պարով կրցան ստեղծել այն տպաւորութիւնը, թէ աշխարհ կը տօնէ ՀԱԳ-ի հարիւրամեակը եւ Լիբանանէն, Հայաստանէն, Ռուսիայէն, Իտալիայէն, նոյնիսկ Ափրիկէէն եկած արուեստագէտներ իրենց տաղանդներով կը տօնակատարեն ՀԱԳ-ի տարեդարձը:

Այդ օր ձեռամբ տնօրէնին եւ մանկապարտիզպանուիին վկայական ստացան Ծաղիկ դասարանի 9 ընթացաւարտներ:



ՀԱԳ-ի բարձրագոյն կարգերու աշակերտներ եւ կարգ մը շրջանաւարտներ, Յունիս 27-28-ին մասնակցեցան Art Therapy-ի աշխատանիստերու, կազմակերպուած MEADOWS ոչ-կառավարական կազմակերպութեան կողմէ (պատասխանատու՝ արուեստագէտներ Լենա Քելեկեան եւ ամուսինը՝ Յակոբ Սիլահեան (1978-ի շրջանաւարտ)):

15 Յունիս 2023-ին միջազգային ուժանիթի փորձագետ դոկտ. Վահան Զանոյեան (1968-ի շրջ.), զեկուցեց «Ազգակ» օրաթերթի առցանց լսարանին «Հայկական մասնագիտական մարդուժի հայրենական մարտահրավերները այսօր», նիւթին մասին:



Երկարամեայ նախկին աշակերտ եւ ՀԱԳ-ի բարերարներէն Հրաչ Միսեռեան նախագահեց Փարիզի ՀՄԸՄ-ի ճաշկերոյթին, 11 Յունիս 2023-ին:



1960-ի շրջանաւարտ Հայկ Մարրլեան ՀԲԸՄ-ի Վերթերաններու համախմբումի հրաւերով Զապէլ Մովսէսեան կեդրոնի նորակառոյց Պերճ եւ Վերա Սեդրակեան սրահին մէջ 27 Մայիս 2023-ին բանախօսեց ՀԲԸՄ-ի մասին եւ ցուցադրեց իր պատրաստած 7 վայրկեան-նոց ֆիլմը Միութեան մասին:

Երկարամեայ նախկին աշակերտ դոկտ. Նուպար Աֆէեան խօսք ատու «Ապագայ հայկականը» առաջին համաժողովին Հայաստանի ամերիկեան համալսարանին մէջ 19 Մայիս 2023-ին, հայութեան ապագայի տեսլականի հարցին իրապաշտական մօտեցումով:




Համազգայինի «Արեգ» մանկապատանեկան թատերախումբը 7 Մայիս 2023-ին Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ ներկայացուց



«Թումանեան երէկ եւ այսօր» թատերախաղը, բեմադրութեամբ Սիլվա Սողոմոնեանի (1987-ի շրջ.):

Տոքթ. Հրանդ Խաչատուրեան (1950-ի շրջ.) իր մօր՝ Էֆրոնիա Նազարեան-Խաչատուրեանի յուշերը անգլերէնի թարգմանած է “The Story of My Life From Anatolia to California” խորագրով: Գիրքը հրատարակուած է Հայկազեան համալսարանի հրատարակչականէն, 2023-ին, Պէյրութի մէջ:



10 Ապրիլ 2023-ին մաէսթրօ Կարօ Աւեսեան (1998-ի շրջ.) դեկավարեց Լիբանանի սիմֆոնիք նուագախումբը Պրերքէի մէջ տեղի ունեցած Քրիստոսի խաչելութեան եւ հրաշափառ յարութեան նուիրուած երաժշտական ձեռնարկին, մարոնիթ համայնքի կարտինալ Պշարա Պուրթոս Ռաի պատրիարքին հովանատրութեամբ: Նշենք, որ նուագախումբին մաս կը կազմէ թաւջութակահարուի Շուշան Թորքաթլեան (ծն. Արթինեան, 2003-ի շրջ.):



ՀԲԸՄ-ի Լիբանանի պաշտօնաթերթ «Խօսնակ»-ի 65-ամեակը նշուեցաւ 15 Ապրիլ 2023-ին Աիրամճեան կեդրոնին մէջ: Պարգեւատրուեցան վաստակաւոր կրթական մշակ եւ հրապարակագիր Պարոյր Ադպաշեան (1964-ի շրջ.) իբր նախկին խմբագիր, եւ նախկին ուսուցչուի տիկ. Անի Ադպաշեան եւ ՀԱԳ-ի արուեստի ուսուցիչ պր. Վազգէն Մուղալեան՝ իբր աշխատակիցներ:

Հաղորդավար Զաէն Գոյումճեան (1987-ի շրջ.), Պէյրութի «Սաութ Քըլ Լուպնէս» ձայնասփիւռի կայանի «Պոնժուրէյն մա՛ա Զաէն» յայտագրէն, 24 Ապրիլ 2023-ին դպրոցի 100-ամեակին առիթով կարճ գրոյց մը ունեցաւ դպրոցի հոգաբարձութեան ատենապետ Ներսէս Պաղտոյեանի (1979-ի շրջ.) հետ:



ՀԱԳ-ի երկարամեայ նախկին աշակերտ ֆրանսարենակ մեներգիչ Վիգէն Դարբինեան երգահանդէս մը տուաւ 6 Ապրիլ 2023-ին Փասատենայի ՀԲԸՄ-ի թատերասրահին մէջ:



Նախկին աշակերտուի Նորա Պարութճեան (Փարիզ) կը տնօրինէ երիտասարդական եւ պատանեկան կայքէջ մը Ծիծեռնակ (www.dzidzernag.wordpress.com):



25 Ապրիլ 2023-ին, Համազգայինի կազմակերպութեամբ, հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան 108-ամեակը նշուեցաւ երաժշտական ձեռնարկով մը Պրերքէի մէջ, մարոնիթ պատրիարքին հովանատրութեամբ: Ձեռնարկին մաս կազմեց նաեւ դաշնակահար Մարիա Փալազեան-

ԲԱԽՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ

- Նախկին աշակերտուհի Քրիստին (ծն. Ադամ-եան) Վահրաբեան եւ ամուսինը բախարաւորութեան մանչ զաւակով մը՝ Ալեք, 14 Յունիս 2023-ին, Պէյրութ:
- Նախկին աշակերտ Յոլակ Եունիսէս եւ կինը 30 Յունուար 2023-ին բախարաւորութեան մանչ զաւակով մը՝ Կարօ, Պէյրութի մէջ:
- 2007-ի շրջանաւարտ Շանթ Իգնատիան եւ կինը 15 Ապրիլ 2023-ին բախարաւորութեան դուստրով մը՝ Աննա Քրիսթինա:
- Արա Պահարեան (1986-ի շրջ.) եւ կողակիցը բախարաւորուած են առջինեկ դուստրով մը՝ Լարա, 28 Մայիս 2023-ին, Լոս Անճելըսի մէջ:
- Յապաղումով րեղեկացանք, թէ 2005-ի շրջանաւարտ Սարին (ծն. Ճորլեան) Տէմիրճեան եւ ամուսինը բախարաւորուած են դուստրով մը՝ Սոֆիա, 11 Յուլիս 2022-ին, Երեւանի մէջ:

ՊԱԿԿ

- 2013-ի շրջանաւարտ Ժան Չիլինկիրեան պատկուցաւ օրդ. Ժիւսթին Գոնսի հետը Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ 14 Մայիս 2023-ին, Անթիլիաս:
- Օրդ. Ալին Քէշիշեան (2005-ի շրջ.), Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ պատկուած է Գէորգ Սարաֆեանի հետը 8 Յուլիս 2023-ին:

ԻՐԵՆՑ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏԸ ԳՏԱՆ...

- † 5 Ապրիլ 2023-ին Լոս Անճելըսի մէջ մահացած է Հայաստանին եւ Արցախին մեծապէս օժանդակած 1948-ի շրջանաւարտ ԿԱՐԳԷՍ ՆԱՃԱՐԵԱՆ (1930-2023), յառաջացեալ տարիքին:
- † 1950-51-ի Է. դասարանի աշակերտ ժամագործ ՃՈՐՃ ՇԻԹԻԼԵԱՆ մահացած է 7 Մարտ 2023-ին Լոս Անճելըսի մէջ:

Բարսեղեան (2007-ի շրջ.): Նախապէս՝ 18 Մարտ 2023-ին, տիկ. Բարսեղեան դաշնամուրով մասնակցած էր լիբանանահայ մեներգչուհի Շողիկ Թորոսեանի երգահանդէսին Լոստոնի Ս. Քաթփըրթ եկեղեցիին մէջ:

1985-ի շրջանաւարտ Հիլտա Քիրեճեան-Յարութիւնեան 16 Մայիս 2023-ին ընտրուած է Թէքէեան մշակութային միութեան Միացեալ նահանգներու եւ Գանատայի կեդրոնական վարչութեան անդամ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այսու մեր շնորհակալութիւնը կը յայտնենք դպրոցին համար կամաւորաբար աշխատող տիկիներուն, որոնց մէջ յատկապէս կը յիշատակենք տիկնանց զոյգ յանձնախումբերը՝ Օժանդակ մարմինը եւ Ընկերային յանձնախումբը: Առաջինս, դպրոցին մէջ ամենօրեայ ներկայութեամբ ծառայեց քաֆէթերիայէն ներս եւ զանազան առիթներով կազմակերպեց ընդունելութիւններ՝ աշակերտներուն համար: Իսկ Տիկնանց ընկերայինը, տասնամեակէ մը ի վեր, առաւելաբար ընկերային որակաւոր պտոյտներ կը կազմակերպէ, որոնց հասոյթը կը տրամադրուի աշակերտներու ներդպրոցական կեանքի բարօրութեան:

Շնորհակալութիւն կը յայտնենք նաեւ դպրոցի Ծնողաց մարմինին, որ նոյնպէս զանազան առիթներով ուսուցիչներուն եւ աշակերտներուն համար կազմակերպեց ընդունելութիւններ եւ տնօրէնութեան հետ սերտ գործակցութեամբ նպաստեց աշակերտներու առօրեայի եւ կրթութեան բարելաւման:

ՀԱԳ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐՈՒՆ ՊԱՏՈՒԱԲՈՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- ▶ **ՌԻԹՄ-ՔՐԻՍՏԻՆ ՇԱՀԻՆԵԱՆ (2014 շրջ.)** AUA – MA, Political Science and International Affairs
- ▶ **ՅՈՎԻԿ ԱՐԹԻՆԵԱՆ (2015 շրջ.)** Arizona State University – MA, Anthropology
- ▶ **ՅՈՒՇԵԿ ԳԱՅՄԱԳԱՄԵԱՆ (2015 շրջ.)** The London School of Economics and Political Science (LSE) – MSc, International Political Economy
- ▶ **ԿԱՐԻՆԷ ԳԻԼԵԱՆՃԵԱՆ (2017 շրջ.)** Lebanese University – MSc, Management and Conservation of Natural Resources
- ▶ **ՍԻՆԹԻԱ ՍՏԵՓԱՆ (2016 շրջ.)** AUST – BS, Business Management
- ▶ **ԴԱԼԱՐ ԳԱԶԵԶԵԱՆ (2017 շրջ.)** NDU – BA, Tourism & Hospitality Management
- ▶ **ՆԱՐԵԿ ՄԱՆԱԹՃԱԼԵԱՆ (2020 շրջ.)** AUB – BSN, Nursing
- ▶ **ԳԱՐԼԱ ՊԱՍՏԱՃԵԱՆ (2020 շրջ.)** LAU – BSN, Nursing

ՎՐԻՊԱԿ

ԼՐԱՏՈՒԻ-ի նախորդ թիւին մէջ օրիորդ ՍԻՐԱՐՓԻ ԴԱՐԲԻՆԵԱՆԻ մահուան առթիւ կատարուած 500,000 լ.ո. նուիրատուութիւնը կատարուած է ՀԱԳ Տիկնանց ԸՆԿԵՐԱՅԻՆ յանձնախումբին կողմէ, եւ ոչ թէ՛ Տիկնանց օժանդակ մարմինին կողմէ:

Կը հայցենք Տիկնանց ընկերայինի ազնիւ տիկիներուն ներողամտութիւնը, սոյն թիւրիմացութեան համար:

Centennial

Celebrations in Los Angeles

September 29 - October 1

Sheraton Universal, CA

Armenian Evangelical College

Centennial
Celebrations in Los Angeles

WELCOME RECEPTION

Friday, September 29 starting 7:00pm
Sheraton Universal, CA



Armenian Evangelical College

Centennial
Celebrations in Los Angeles

PANEL DISCUSSIONS

Saturday, September 30 at 9:45am
Sheraton Universal, CA



Armenian Evangelical College
under the auspices of the
Armenian Missionary Association of America

Cordially invites you to its

Centennial
Gala Dinner

Keynote Speaker
Dr. Noubar Afeyan

Saturday, September 30, at 6:30PM
Sheraton Universal, Studio City, CA



Armenian Evangelical College

Centennial
Celebrations in Los Angeles

CHURCH SERVICE

Sunday, October 1 at 10:30am
United Armenian Congregational Church, CA



ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիվն է վեր շտրիակալութեամբ ստացուած են հետեւեալ նուիրատուութիւնները:
Բոլոր գումարները ամերիկեան տոլարով են, բացի եթէ նշուած է այլապէս:*

AMAA-ԷՆ

Կրթանպաստ (Գ. շրջան)	1775
Արտակարգ օժանդակութիւն	3992
Դպրոցի վերանորոգութիւն	2500

ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Տէր եւ Տիկ. Ռաֆֆի Գեորգեան	500
Տէր եւ Տիկ. Սարո Տաւոյեան	500
Թիւթիւնճեան ընտանիք	300
Օրդ. Կասիա Գազանճեան	100
Տիար Սարգիս Սիմիթեան	300
Սէրլի եւ Սերենա Հատտատ	100
Տիկին Հելլէն Մալիքեան	200

ԶԱՒԷՆ ՄԱՐԸԵԱՆԻ «ԱՊՐՈՒՄՑ ԷՃԵՐ ԱՆՅԵԱԼԷՆ» ԳԻՐԹԻՆ ՎԱՃԱՌՄԱՆ ՀԱՍՈՅԹ ԴՊՐՈՅԻ ՈՒՍՈՒՅՉԱՅ ՖՈՆԴԻՆ

1965 տոլար եւ 25.500.000 լ.ո. 74 անձերու կողմէ:

10 ՅՈՒՆԻՍԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ ԱՌԻԹՈՎ

Շրջանաւարտ Յարութ Միսիրեան	1500
Շրջանաւարտ տէր եւ տիկ. Մորիս եւ Պերճուհի Կիլեսերեան	1000
Մի ոմն շրջանաւարտ	1000
ՀԱԳ-ի անձնակազմ	500
Մի ոմն	500
Տէր եւ տիկ. Համբիկ Գեորգեան	300
Մի ոմն	300
Տէր եւ տիկ. Ճորճ Իշխանեան	200
Դոկտ. եւ տիկ. Արմէն Իւրնէշլեան	200
Վեր. եւ տիկ. Հրայր Չոլագեան	200
Տէր եւ տիկ. Ներսէս Պաղտոյեան	200
Տոքթ. եւ տիկ. Ալետիս Տազետեան	200
Շրջանաւարտներ Արագ եւ Կարին Տէմիրճեան	200
Տէր եւ տիկ. Պարոյր Աղպաշեան	100
Շրջանաւարտուհի օրդ. Ռեա Էքմէքճի	100
Շրջանաւարտուհի օրդ. Մարինէ Շեհիրեան	100
Շրջանաւարտուհի տիկ. Կարին Հայտօսթեան-Օրջանեան	100
Մի ոմն շրջանաւարտ	100
Մի ոմն	100
Մի ոմն	100
Շրջանաւարտուհի տիկ. Լիզա Սեքիլեան-Նասիֆ	20

Ծանօթ. Վեր. Նշան Պազալեան, Տէր եւ Տիկ. Ֆրետի Էքմէքճի, Օրդ. Փոլին Սաղրեան, Տէր եւ Տիկ. Կարպիս Տէյիրմէնճեան, Մի ոմն շրջանաւարտ եւ 3 այլ անանուն նուիրատուներ, եւս նուիրատուութիւններ կատարեցին:

ԱՅՆ ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տէր եւ տիկ. Սէմիր եւ Վելմա Հերմէզ (տարեկան յատկացում)	5000
Հայաստան Համահայկական հիմնադրամ	4720
Տիկ. Անահիտ Փոլատեան	200
Տիկ. Շերիլ Շապանեան	100
Նախկին աշակերտուհի Կասիա Գարակեօզեան-Շապանեան եւ ամուսինը` Ճոն	100
Մի ոմն	100
Չէօրէքճեան ընտանիք` Երուանդ Չէօրէքճեանի յիշատակին	5.000.000 լ.ո.

Խմբագիր՝ ՏՕՐԵՆ ՂՈՎՏ. ԱՐՄԵՆ ԻՐԱԵՇԼԵԱՆ
Խորհրդատուներ՝ ՏԻԱՐ ՆԵՐՍԵՍ ՊԱՐՏՈՅԵԱՆ
ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՏԵՒՈՐՃԵԱՆ
Էջաղրում՝ ԱՆԻ ԶԵՆՏԵՆԵԱՆ ՊԱՒԷՐ
Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՐԱՄԵՆԵԱԿ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE
P.O. Box 3672-Beirut
Tel: 01 349 816 Fax: 01 751 469
E-mail: A_E_C@cyberia.net.lb
Website: aecbeirut.edu.lb
Facebook: Armenian Evangelical College



ԻՆՍՏԻՏՈՒՏ
 ԳԻՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ,
 ԻՍՏԱՆԿԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ԿՆԵՃԱՆՈՒԹՅԱՆ

**TO KNOW WISDOM AND INSTRUCTION;
 TO PERCEIVE THE WORDS
 OF UNDERSTANDING** PROVERBS 1:2

ԿՆԵՃԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

100

ԿՆԵՃԱՆՈՒԹՅԱՆ

